Գեղարքունիքի մարզպետն ամփոփեց աշխատանքային գործունեության մեկ տարին

18.10.2019թ

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը մարզի Ծաղկունք համայնքի համանուն հյուրատանը մարզային եւ հանրապետական ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ամփոփեց իր աշխատանքային գործունեության մեկ տարին: Ասուլիսը կրում էր «100+ փոփոխություն Գեղարքունիքի մարզում» խորագիրը: Ասուլիսի ընթացքում Գեղարքունիքի մարզպետն անդրադարձավ Գեղարքունիքի մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերին, գրանցված ձեռքբերումներին, առաջընթացին, համագործակցություններին, համայնքներում հրատապ եւ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրներին, դրանց վերաբերյալ տվեց պարզաբանումներ: «Մենք այսօր ասուլիսի անցկացման վայրն այստեղ առանձնահատուկ ենք ընտրել, քանի որ այս համայնքում, որը ոչ մի անգամ չի եղել մարզի զբոսաշրջային քարտեզի վրա, հիմա վերելք է ապրում գյուղական տուրիզմը եւ էկոտուրիզմը՝ շնորհիվ այս հյուրատան ծավալած գործունեության»,-ասուլիսի սկզբում նշեց մարզպետը:

Անդրադառնալով **կրթության** ոլորտում իրականացված աշխատանքներին՝ Գնել Սանոսյանը նշեց, որ 2019 թվականի բյուջետային տարվա սկզբին մարզի 44 դպրոցներում կատարվել է աշխատավարձի բարձրացում՝ միջին մակավարժական դրույքի մինչև 10 տոկոսի չափով:Մարզպետը նշեց, որ մեկ տարվա ընթացքում 61 դպրոցներում կատարվել են 560 միլիոն դրամի շինարարական-վերանորոգման եւ գույքի ձեռքբերման աշխատանքներ: Մարզի 6 դպրոցներում 2019-2020 ուսումնական տարվանից գործում են «Արմաթ» Ինժեներական լաբարատորիաներ, որտեղ հաճախում են շուրջ 160 աշակերտ: 45 դպրոցում գործում են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ՝ 112 խմբում հաճախում են շուրջ 1200 աշակերտ: «Նոր ուսումնական տարում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության , Գեղարքունիքի մարզպետարանի եւ համայնքապետարանների համագործակցությամբ բացվել է 5 նախակրթարան: «Դասավանդիր Հայաստան» ծրագրի հետ համագործակցությամբ սահմանամերձ եւ հեռավոր համայնքներում համալրվում են մանկավարժական թափուր տեղերը:Նկատելի հաջողություններ ունենք դպրոցաշինության ոլորտում: Այժմ պետական միջոցներով ընթանում են Զոլաքարի թիվ 2, Գավառի թիվ 2 եւ Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցների կառուցման աշխատանքները: Շուտով հիմքից նոր շենքեր կկառուցվեն Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ եւ Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցների հին շենքերի տեղում: Մարզի երեք գյուղերում՝ Ջիլում, Շատջրեքում եւ Լեռնահովիտում, դարձյալ պետական միջոցներով, կկառուցվեն մինչեւ հարյուր տեղանոց մոդուլային դպրոցներ:Վարդենիսի թիվ 2,3,4 հիմնական դպրոցներն իրենց պատմության մեջ առաջին անգամ կանցնեն կենտրոնացված ջեռուցման՝ շնորհիվ համայնքապետարանի եւ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության տրամադրած , ինչպես նաեւ դպրոցների կողմից տնտեսված միջոցների հատկացման: Ակնառու ձեռքբերում եմ համարում Գեղարքունիքի գյուղի միջնակարգ դպրոցում բարերարի միջոցներով լրագրական դասասենյակի ստեղծումը եւ աշակերտական ամսաթերթի հրատարակումը, որտեղ հիմնականում տեղ են գտնում դպրոցականների

հոդվածները: Թերեւս, նման նախադեպ ոչ միայն մեր մարզում, այլ նաեւ Հայաստանում դժվար է գտնել: Գավառի պետթատրոնի շահագործումից հետո թատերական կյանքը շատ ավելի է աշխուժացել մարզում: «Թատերական Գավառ» փառատոնը, որին մասնակցեցին Հայաստանի առաջատար թատրոնները, խոսում է այն մասին, որ մեր մարզի մշակութային կյանքը գտնվում է ճիշտ ճանապարհի վրա: Բացի այդ, սուբվենցիոն 103 ծրագրերի ցանկում իրականացվում են նաեւ մշակութային ծրագրեր: Թանգարան է հիմնվում Լճաշենում, հիմքից մշակույթի տուն է կառուցվում Մեծ Մասրիկում, 15 համայնքներում կառուցման ավարտական փուլին են մոտենում ֆուտբոլի փոքր խաղադաշտերի շինարարությունները, որոնք իրականացվում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի եւ մարզպետարանի ու համայնքապետարանների համագործակցությամբ»,-ներկայացրեց մարզպետը:

Խոսելով **առողջապահության** ոլորտում գրանցված ձեռքբերումների մասին՝ Գեղարքունիքի մարզպետը թվարկեց, որ Սեւանի բժշկական կենտրոնում տեղադրվել է համակարգչային շերտագրման սարք, որն իր նշանակությամբ առաջինն է Գեղարքունիքի մարզում: Գավառի ԲԿ-ն ձեռք է բերել էնդոսկոպիկ վիրահատական սարք, որը թույլ է տալիս իրականացնել էնդոսկոպիկ վիրահատություններ հենց տեղում: Մարտունու ԲԿ-ում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում հեմոդիալիզի ծառայության բացման ուղղությամբ: Վարդենիսի հիվանդանոցը նվիրատվությամբ ձեռք է բերել բիոքիմիական անալիզատոր սարքավորում բարերարի միջոցներով տեղադրվել է արեւային փոքր էլեկտարէներգիայի արտադրության կայան: Շուտով Մարտունու ծննդատունը 9,5 միլիոն դրամ արժողությամբ ուլտրաձայնային հետազոտման սարք ձեռք կբերի: Նոյեմբերից սկսվելու են Մարտունու ԲԿ-ի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: «Վարդենիսի հիվանդանոցը մեկ տարի առաջ երեք միլիոն դրամից ավելի պարտքեր ուներ կուտակած: Նոր տնօրենի նշանակման արդյունքում այսօր արդեն այս բուժհիմնարկն ունի 3 միլիոն դրամի տնտեսում: Ուզում եմ դրվատել նաեւ Մարտունու բժշկակական կենտրոնի տնօրենի արդյունավետ աշխատանքը, ինչի շնորհիվ սոնոֆգրաֆիայի ծառայությունից մեկ ամսում հիմնարկում մուտք է եղել ավելի քան 400 հազար դրամ, այն դեպքում, երբ նախորդ տնօրենի օրոք այդքան գումար մուտքագրվել է ողջ տարվա ընթացքում »,- հավաստեց Գնել Սանոսյանը:

2018 թվականի հոկտեմբեր ամսից մինչեւ ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում **ընտանեկան եւ սոցիալական նպաստ** ստացող ընտանիքներից կրճատվել է 983 ընտանիք: «Սրանք այն ընտանիքիներն են, որոնք ունեն լավ տներ, ավտոմեքենաներ, ապահով կենցաղ, սակայն համակարգ են թափանցել զարտուղի ճանապարհներով: Նման ընտանիքների ընդգրկումն այլեւս կբացառվի: Մեր հետեւողական աշխատանքի արդյունքում այս պահին մարզում չունենք մուրացիկ կամ թափառող երեխաներ»,-ասաց բանախոսը:

Առավել լուրջ ձեռքբերում է արձանագրել քաղաքաշինության ոլորտը: 2019 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ մարզում իրականացվում են 7 **ճանապարհների հիմնանորոգման** եւ միջին նորոգման աշխատանքներ: Այս ծրագրերով մինչեւ ընթացիկ տարվա ավարտը կհիմնանորոգվի շուրջ 37 կիլոմետր

տարբեր նշանակության ավտոճանապարհ, որի ներդրումը կազմելու է 3 միլիարդ 558.4 միլիոն դրամ: 2019 թվականի ընթացքում իրականացվել եւ իրականացվում են մարզի համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված **103 սուբվենցիոն ծրագիր, որոնց փաթեթների ընդհանուր գումարը կազմում է 128 ծրագիր**: «Այսպես, 2018 թվականին մարզպետարանի կողմից մարզում իրականացված սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության ծրագրերի ծավալները կազմել են 952 միլիոն դրամ, մինչդեռ այս տարի դրանք հասնում են 5 միլիարդ 182 միլիոն դրամի, իսկ մյուս գերատեսչությունների կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում մարզում իրականացվող կապիտալ շինարարության ծավալները հասնում են 10 միլիարդ 228 միլիոն դրամի: Այսպիսի ձեռքբերում մարզի պատմության մեջ ոչ մի անգամ չի եղել ու այս պահին ողջ մարզը վերածվել է շինհրապարակի: Միայն ճանապարհաշինության ոլորտում ներդրվել է 6,1 միլիարդ դրամ, ինչի արդյունքում մենք ասֆալտապատում ենք 72 կիլոմետր երկարության միջպետական, հանրապետական ու համայնքային նշանակության ճանապարհներ: Համեմատական կարգով ասեմ, որ 2017 թվականին Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում միասին վերցրած հիմնանորոգվել է ընդամենը 68 կիլոմետր ճանապարհ: Շատ կարեւոր էր Ծափաթաղ-Վարդենիս ավտոճանապարհի 12,5 կիլոմետր գրունտային ճանապարհի ասֆալտապատումը, որով արդեն Հայաստանի հյուսիսային մարզերն ու Ջավախքն ամենակարճ ճանապարհով կապվում են Արցախին: Այն խթանելու է նաեւ Սեւանա լճի հյուսիսարեւելյան ափերի գյուղական բնակավայրերի զարգացմանը, զբոսաշրջության ակտիվացմանը: Հավելեմ, որ այս ճանապարհահատվածի ասֆալտապատումը չէր հաջողվել իրականացնել անգամ Խորհրդային Միության օրոք:Մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ուժեղացրել ենք համայնքային ենթակառուցվածքները՝ 17 բնակավայրերում կառուցելով ոռոգման, 13 համայնքներում՝ խմելու ջրի մատարարման համակարգեր, բազմաթիվ համայքներում՝ լուսավորվածության ցանցեր: ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցներով իրակակացվում է հրատապ լուծում պահանջող 16 ծրագիր՝ 428 միլիոն դրամ ընդհանուր արժեքով»,-ասաց Գնել Սանոսյանը:

Անդրադառնալով ներդրումային ծրագրերին՝ մարզպետը նշեց, որ մարզում այս տարվա մայիս ամսին անցկացված «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» բիզնես համաժողովում ներկայացված ծրագրերից իրականացվել են երկուսը, ընթացքի մեջ են յոթ այլ ծրագրեր, 18 ներդրումային ծրագրեր կամ նոր գաղափարներ սպասում են իրենց մեկնարկին: Օտարերկյա ներդրողների հետ ընթանում է ակտիվ համագործակցություն: «Շատ կարեւոր ձեռքբերում կլինի Արգիճիի ջրամբարի կառուցումը մասնավոր ներդրողի կողմից, որոշակի պայմաններով: Համագործակցում ենք երկու գործընկեր ներդրողների հետ: Սրանով Հայաստանում առաջին անգամ մասնավոր ներդրողների միջոցներով կկառուցվի ռազմավարական կարեւորության ջրամբար՝ գյուղատնտեսական ու բնապահպանական մեծ նշանակությամբ:12 համայնքներ այս ջրամբարի կառուցման արդյունքում կանցնեն ինքնահոս ոռոգման: Շինարարությունը կարժենա 5-5,5 միլիոն դոլար, այն դեպքում, երբ տարիներ առաջ կառավարությունն ութ միլիոն դոլարից ավելի ծախս է արել՝ մի քանի համայնքների համար Սեւանա լճի ջրերի վրա պոմպակայաններ կառուցելով,

տարեկան հսկայական քանակի էլեկտրաէներգիա ծախսելով ու Սեւանի ջրային ռեսուրսները վատնելով»,-ուշադրություն հրավիրեց մարզպետը:

Անդրադառնալով արտաքին տնտեսական կապերի եւ **համագործակցության** ոլորտին՝ բանախոսը նշեց, որ համագործակցության արձանագրություն է ստորագրվել Արաբական Միացյալ Էմիրություններում գործող «Ռոյալ ֆրոնտ» ներդրումային ընկերության հետ: Հուշագիր է նախապատրաստվում նաեւ «Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամի» հետ: Առաջիկայում համագործակցության նոր հուշագիր կստորագրվի Գեղարքունիքի մարզի եւ Ֆրանսիայի հանրապետության Իզերի Դեպարտամենտալ խորհրդի միջեւ: «Հոկտեմբերի վերջերից կամ նոյեմբերի սկզբներից մարզում կլինեն Միացյալ Էմիրությունների եւ Չինաստանի պատվիրակությունները: Հանդիպումների ընթացքում մենք կդնենք նոր խոշոր ու զարգացող ծրագրերի հիմքերը: Լուրջ ակնկալիքներ ունենք նաեւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի հետ համագործակցության ծրագրերից:Գերակա ուղղությունները լինելու են երեքը՝ գյուղատնտեսություն, տուրիզմ եւ այլընտրանքային էներգետիկայի արտադրություն: Այս նկատելի ձեռբերումներն ազդակ են լինելու, որ եկող տարում մենք կարողանանք բազմապատկել ներդրումները, կապիտալ շինարարության ծավալները, առաջ քաշել նոր ծրագրեր ու գաղափարներ»,-վստահեցրեց մարզպետը:

Գնել Սանոսյանն անդրադարձավ նաեւ **ֆինանսական, գյուղատնտեսության, ՏԻՄ, երեխաների իրավունքների պաշտպանության, հողաշինարարության եւ հողօգտագործման ոլորտներում գրանցված արդյունքներին:** «Յուրահատուկ էր մարզում ձկան փառատոնի անցկացումը: Հողաշինարարության ոլորտում մեր մասնագետների կողմից հայտնաբերվել է 1500 հեկտար թաքցված վարելահող, որոնք մշակողները ոչ մի լումայի վարձ չեն մուծել հողօգտագործման դիմաց: Պետական աջակցության շնորհիվ Ճամբարակի տարածքում 50 հեկտարից ավել աշնանացան է կատարվել, ստեղծվել են ինտենսիվ այգիներ մի քանի տասնյակ հեկտարների վրա, իրականացվում են անասնապահության զարգացման խոշոր ծրագրեր, աղբահանություն իրականացնող համայնքների թիվն ավելացել է 10-ով: Հիմնովին ապահովված է մարզպետարանի աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, մարզային ենթակայության հիմնարկներում անցկացված աուդիտների արդյունքում բացահայտել ենք բազմաթիվ օրինախախտումներ, որոնց հիմքերով հարուցվել են քրեական գործեր: Այս ամենը չէր լինի, եթե արդյունավետ ու համագործակցված չաշխատեին մարզպետարանի ստորաբաժանումները, համայնքապետարանները, մարզի ուժային կառույցները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, զանգվածային լրատվամիջոցները եւ հասարակական կազմակերպությունները»,-ամփոփեց մարզպետը՝ կանգ առնելով նաեւ զանազան պատճառներով չիրականացված մի շարք ծրագրերի վրա, որոց մեկնարկը տրվելու է եկող տարվա ընթացքում: «Ուզում եմ անձամբ ներողություն խնդրել մարզի Ծովակ, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Արծվանիստ, Չկալովկա համայնքների, Ցամաքաբերդ եւ Գոմաձոր բնակավայրերի բնակիչներից, որտեղ նախատեսված ճանապարհաշինական աշխատաքները կյանքի չկոչվեցին մի շարք պատճառներով, որտեղ մարզպետարանը չուներն իր մեղքի բաժինը: Բոլոր ուղղություններում աշխատանքները կմեկնարկեն եկող

տարվա գարնանից, առանց իսկ կասկածելու: Մարտունի քաղաքի մարզադաշտի կառուցումն էլ ձգձգվել է ոչ թե մեր, այլ մարզադաշտի սեփականատիրոջ ու քաղաքապետարանի անհաջող բանակցությունների պատճառով: Կարծում եմ, որ բոլորն էլ ըմբռնումով կմոտենան հարցերին ու շատ շուտով կտեսնեն իրական արդյունքները»,-ամփոփեց Գնել Սանոսյանը: Այնուհետև մարզպետը պատասխանեց տարբեր լրատվամիջոցների կողմից առաջադրված բազմաբնույթ հարցերին: